

ք. Երևան

« 19 » 08 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս հիմնադրամի տնօրեն Սարգիս Բաղինյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՊԱԼ-ՆԵԹ» ՍՊԸ և «ԱՅԱՔՍ ՇԻՆ» ՍՊԸ կոնսորցիումը՝ «ՊԱԼ-ՆԵԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ավագ Ստեփանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և «ԱՅԱՔՍ ՇԻՆ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Գեղամ Հովհաննիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցի վերանորոգման», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցի վերանորոգման» աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՀՏՋՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/4 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

«ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցի վերանորոգման» աշխատանքներ - 150 օրացուցային օր,
«ՀՀ Գեղարքունիքի մարզի Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցի վերանորոգման» աշխատանքներ - 210 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.1.8 Կապալառուի կողմից Պայմանագրով սահմանված կանխավճարը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակով օգտագործված չլինելու դեպքի հայտնաբերման դեպքում Կապալառուից պահանջել 5 օրյա ժամկետում Պատվիրատուին վերադարձնելու պայմանագրով նախատեսված նպատակով չօգտագործված կանխավճարի գումարը:

3.1.9 Առաջարկել Կապալառուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.3.3 Առաջարկել Պատվիրատուին կասեցնել կամ համարել կասեցված պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետի ընթացքը՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտության դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների իրականացման հնարավոր չէ իրականացնել շինարարական աշխատանքները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնիտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնիտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **առնվազն 365 օրացուցային օր**։ Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.11 Պատվիրատուին ներկայացնել կանխավճարի՝ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման նպատակային օգտագործումը հավաստող փաստաթղթերը՝ հաշիվ-պահանջագրերը, վավերագրերը, անդորրագրերը և այլն՝ Պատվիրատուի կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 օրյա ժամկետում:

3.4.12 Բանկային երաշխիքի հետ միասին Պատվիրատուին ներկայացնել կանխավճարի օգտագործման պլանավորումը (ցանկ), որը ներառում է գնվելիք ապրանքների և ծառայությունների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ ծախսերի անվանումները, քանակները և վճարման ենթակա գումարի չափը:

3.4.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կասեցվելու կամ կասեցված համարվելու դեպքում, եթե Պայմանագրի ժամկետի ավարտի օրը համընկնում է կասեցման ժամանակահատվածի հետ ներկայացնել ավելացված ժամանակահատվածի համար օրենսդրությամբ նախատեսված՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ դրամի ձևով ապահովումները՝ մինչև կասեցումը գործող պայմանագրային ժամկետի ավարտից առնվազն 10 օր առաջ, և եթե կասեցված ժամանակահատվածը չի գերազանցում Պայմանագրի մինչև կասեցումը գործող ժամկետը, ապա կասեցված ժամկետի ընթացքը վերսկսելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **516,210,510 (հինգ հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր տասը հազար հինգ հարյուր տասը) ՀՀ դրամ, ընդ որում՝**

1-ին չափաբաժին 147 320 400 (մեկ հարյուր քառասունյոթ միլիոն երեք հարյուր քսան հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ որից 24 553 400 (քսանչորս միլիոն հինգ հարյուր հիսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին 368 890 110 (երեք հարյուր վաթսուներեք միլիոն ութ հարյուր ինսուսու հազար մեկ հարյուր տասը) ՀՀ դրամ՝ որից 61 481 685 (վաթսուամեկ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ **ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝**

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է):

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է:

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ:

ՎԳ -ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում

տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նցախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Նախահաշվային գնի 0,05 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուին ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուց հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելից գումարների հետ՝ անկախ պահանջի զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, 1.1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.14 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.15 Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը կարող է կասեցվել կամ համարվել կասեցված աշխատանքների կատարումն անհնարին դարձնող հանգամանքների առկայության, այդ թվում՝ նախագծային փոփոխություններ իրականացվելու դեպքում, եթե առանց նախագծային փոփոխությունների պայմանագրով սահմանված աշխատանքների կատարումն անհնար է դարձել: Սույն կետի իմաստով՝ կասեցվող ժամանակահատվածը որոշվում է Պատվիրատուի կողմից և դրա մասին կողմերի միջև կնքվում է համաձայնագիր:

Պայմանագրի կապարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝

«Շինարարության իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժիններ ի համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1, 2	<p>Շինարարության իրականացում, 3-րդ և բարձր դասի լիցենզիա, ներդիրով</p> <ul style="list-style-type: none"> ✓ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմեխանիկա) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31

ՀՎՀՀ՝ 00846441

Հ/Հ՝


Չափաբաժին 1՝ 900011058246

Չափաբաժին 2՝ 900011058220

Կենտրոնական գանձապետարան

Գործադիր տնօրեն

Սարգիս Բաղիկյան



/ստորագրություն/

Կ.Տ



ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՊԱԼ-ՆԵԹ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ ք. Երևան, Գարեգին
Նժդեհի փ. 46, 104 սենյակ

ՀՎՀՀ՝ 00462893

Բանկ՝ «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2053122084601001

Տնօրեն
Ավագ Ստեփանյան



/ստորագրություն/

Կ.Տ



«ԱՅԱՔՍ ՇԻՆ» ՍՊԸ


Հասցե՝ ՀՀ Վայոց Ձորի մարզ, ք.
Եղեգնաձոր, Մուրացանի 4

ՀՎՀՀ՝ 08916587

Բանկ՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ

Հ/Հ՝ 2479600415200000

Տնօրեն
Գեղամ Հովհաննիսյան



/ստորագրություն/

Կ.Տ



Σ. Γεωργίου Γεωργίου
Α. Γεωργίου Α. Γεωργίου
Δ. Γεωργίου Γεωργίου
Β. Γεωργίου Γεωργίου

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 1 - «ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցի վերանորոգման» աշխատանքների կատարման

N	Նկարագրություն	Չափման միավոր	Ծավալ Նախահաշվ.	Միավորի արժեք (դրամ)			Ընդամենը՝ Ընդամենը՝
				Նյութեր	Կատարում	Ընդամենը միավորի գին	
				A	B	C	
1	Քանդման աշխատանքներ						17,808,847
1	Տանիքի թիթեղյա ծածկույթի քանդում	մ2	738.000	147.74	0.00	147.74	109,032
2	Ձեղնալուսամուտների թիթեղյա ծածկույթի քանդում	մ2	10.000	147.74	0.00	147.74	1,477
3	Ջրհորդանների քանդում	մ2	123.000	147.74	0.00	147.74	18,172
4	Ջրհավաքների քանդում	կ-տ	8.000	353.24	0.00	353.24	2,826
5	Չափարների քանդում	կ-տ	8.000	353.24	0.00	353.24	2,826
6	Ջրահեռացման խողովակների սպամոնտաժում	գմ	52.000	157.63	0.00	157.63	8,197
7	Կավարամածի եւ տախտակամածի քանդում	մ2	738.000	113.60	0.00	113.60	83,837
8	Տանիքի վնասված փայտանյութի կոնստրուկցիաների քանդում	մ3	2.000	23,352.50	0.00	23,352.50	46,705
9	Առաջացած և գոյություն ունեցող շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 5 կմ	տ	46.000	3,202.81	0.00	3,202.81	147,329
10	Տանիքի կառուցում Տանիքի ծածկույթի պատրաստում գործարանային գոնաձածկույթով գունավոր ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից d=0.5մմ /KП-21-0.5/	մ2	738.000	10,640.55	0.00	10,640.55	7,852,726
11	Ջրհորդանի իրականացում գործարանային գոնաձածկույթով գունավոր ցինկապատ հարթ թիթեղից d=0.5,	գմ	160.000	11,323.99	0.00	11,323.99	1,811,838
12	Գազաթնամասի իրականացում գործարանային գոնաձածկույթով գունավոր ցինկապատ հարթ թիթեղից d=0.5մմ	մ2	25.000	7,459.93	0.00	7,459.93	186,498
13	Տանիքի փոքր ծածկույթների պատրաստում 0.5մմ հաստ. հարթ ցինկապատ գունավոր թիթեղից	մ2	139.000	7,748.37	0.00	7,748.37	1,077,023
14	Ջրահեռացման խողովակների տեղադրում գործարանային գոնաձածկույթով գունավոր ցինկապատ թիթեղից 80x100մմ., ներառյալ ջրի ու ձագարները, անկյունակները	կ-տ	12.000	57,874.43	0.00	57,874.43	694,493
15	Փայտանյութի լրացում տանիքի կոնստրուկցիաների համար	մ3	13.000	247,349.07	0.00	247,349.07	3,215,538
16	Կավարամած տեղադրում /տախտակ 50x50մմ/	մ3	4.500	244,887.48	0.00	244,887.48	1,101,994
17	Ծպեղնաուղեների կապերի լրացում մետաղալարով Φ2x4մմ պարապետին, կամ ծածկի սալերին	կգ	20.000	1,475.55	0.00	1,475.55	29,511

18	Ձեղնապատուհանների պատում ցինկապատ հարթ գործարանային գունածեկույթով գունավոր ցինկապատ թիթեղով d=0.5մմ, S=4x4.5մ2	ս2	18.000	7,747.98	0.00	7,747.98	139,464
19	Ձեղնապատուհանների պատաստում շերտափեղկերով	հատ	4.000	63,614.24	0.00	63,614.24	254,457
20	Շերտափեղկերի յուղաներկում բարելավված որակի 2 շերտ	ս2	3.400	2,873.28	0.00	2,873.28	9,769
21	Ծխնիներ, փական շերտափեղկերի համար	կ-տ	4.000	2,197.77	0.00	2,197.77	8,791
22	Փայտյա կառուցվածքների հրապաշտպանում	ս3	29.000	11,056.37	0.00	11,056.37	320,635
23	Կավարամածի եւ տախտակամածների հրապաշտպանում	ս2	738.000	358.79	0.00	358.79	264,787
24	Փայտյա կառուցվածքների մշակում հականեխիչ նյութով	ս3	29.000	3,455.24	0.00	3,455.24	100,202
25	Կավարամածի եւ տախտակամածի մշակում հականեխիչ նյութով	ս2	738.000	434.58	0.00	434.58	320,720
2	Ճարտարապետաշինարարական մաս						50,697,648
1	Միջնորների քանդում 100մմ հաստության	ս2	31.000	1,246.01	0.00	1,246.01	38,626
2	Միջնորների քանդում 200մմ հաստության	ս3	3.200	11,674.82	0.00	11,674.82	37,359
3	Ներքին և արտաքին դռների ապամոնտաժում	ս2	75.000	1,780.65	0.00	1,780.65	133,549
4	Մանրահատակի ապամոնտաժում, շրիշակների հետ միասին	ս2	265.200	828.61	0.00	828.61	219,747
5	Սալիկներից հատակների քանդում կապակցող շերտի հետ միասին	ս2	273.000	653.73	0.00	653.73	178,468
6	Փայտյա հատակի քանդում հինակամախի հետ միասին	ս3	17.000	23,352.50	0.00	23,352.50	396,993
7	Հախճասալի քանդում ցեմենտ-ավազային սվաղի հետ միասին	ս2	9.400	1,187.61	0.00	1,187.61	11,164
8	Հատակի խարամաբետոնե շերտի քանդում	ս3	6.700	3,924.94	0.00	3,924.94	26,297
9	Հատակի ցեմենտ-ավազային շերտի քանդում 50մմ հաստության	ս2	15.600	950.63	0.00	950.63	14,830
10	Սանհանգույցի բետոնե թումբերի քանդում	ս3	1.500	23,387.64	0.00	23,387.64	35,081
11	Մասնակի գաջի սվաղի քանդում պատերից, սյուներից, հեծաններից	ս2	420.000	1,187.61	0.00	1,187.61	498,796
12	Ջրաեմուկսիոն ներկի մաքրում պատերից	ս2	1,585.000	426.32	0.00	426.32	675,717
13	Յուղաներկի մաքրում պատերից	ս2	150.000	535.95	0.00	535.95	80,393
14	Վնասված հատվածների գաջի սվաղի քանդում առաստաղներից	ս2	60.000	1,553.03	0.00	1,553.03	93,182
15	Աստիճանների պողպատե բազրիքների ապամոնտաժում	տ	0.350	53,598.40	0.00	53,598.40	18,759
16	Հովհարի տանիքի թիթեղյա ծածկույթի քանդում	ս2	8.000	147.74	0.00	147.74	1,182
17	Հովհարի պողպատե կոնստրուկցիաների քանդում	տ	0.300	53,598.40	0.00	53,598.40	16,080
18	Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 5 կմ	տ	120.000	2,532.87	0.00	2,532.87	303,944
19	Կառուցողական աշխատանքներ Միջնորների կառուցում թեթևաբետոնե բլոկներից 100մմ հաստությամբ	ս2	67.500	4,440.11	0.00	4,440.11	299,707
20	Միջնորների կառուցում թեթևաբետոնե բլոկներից 200մմ հաստությամբ	ս3	3.300	31,261.24	0.00	31,261.24	103,162
21	Անցքերի շաղափում Φ10մմ, L=150մմ	հատ	90.000	393.60	0.00	393.60	35,424
22	Անցքերի ներարկում պոլիմերցեմենտային շաղախով	ս3	0.035	192,956.01	0.00	192,956.01	6,753
23	Բլոկերի դատարկությունների ցում B7.5 դասի թեթև բետոնով	ս3	3.200	39,433.33	0.00	39,433.33	126,187
24	Միջնորների շարվածքի ամրանավորում	տ	0.322	90,133.48	0.00	90,133.48	29,023
25	Ամրան Φ8A500C /Ռուսաստան/	տ	0.322	438,245.44	0.00	438,245.44	141,115

26	Ե/բ միաձույլ բարավորի պատրաստում B15 դասի բետոնից /b=100մմ/	մ3	0.368	98,094.12	0.00	98,094.12	36,099
27	Ամրան Փ12A500C /Ռուսաստան/	տ	0.040	436,936.20	0.00	436,936.20	17,381
28	Ամրան Փ6A240 /Ռուսաստան/	տ	0.007	405,539.55	0.00	405,539.55	2,981
29	Փրփրապլաստ 20մմ	մ2	4.300	405.02	0.00	405.02	1,742
30	Փրփրապլաստ 30մմ	մ2	4.300	452.11	0.00	452.11	1,944
31	Այլումինե 60մմ հաստ. պլոֆիլներով ջերմակամրջակով 4+4մմ ապակեփաթեթով արտաքին դռների տեղադրում, /ներառյալ սարքերը, կողպեքները, ապակեփաթեթը/	մ2	17.100	124,418.51	0.00	124,418.51	2,127,557
32	Այլումինե 60մմ հաստ. պլոֆիլներով ջերմակամրջակով 4+4մմ ապակեփաթեթով արտաքին չբացվող մասի տեղադրում, /ներառյալ, ապակեփաթեթը/ չբացվող	մ2	4.770	60,587.05	0.00	60,587.05	289,000
33	ՄՐՖ-ից խուլ դռների տեղադրում երկտակ ներկված, ՄՐՖ-ից շրջանակով, ներայլալ՝ ՄՐՖ-ից երեսակալները կողպեքներ, բռնակներ, ծխնիներ), համաձայնեցնել պատվիրատուի հետ	մ2	25.740	75,276.46	0.00	75,276.46	1,937,616
